

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՇՐՋԱՆ



HAMAZKAYIN
WESTERN REGION | USA

ՅՈՒՇ-ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔ

1968-2023

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Պատի՛ւ մեր ազգի սփիւռքեան հատուածի ազգային դիմագիծի պահպանման համար անգնահատելի դեր կատարած մեր երեկուան ու այսօրուան բոլոր ազգային կառոյցներուն:

Պատի՛ւ 55-ամեայ Համազգայինին, որ արուեստի իր խումբերով, մասնագիտական միաւորներով, մասնաճիւղերու ցանցով եւ մշակութասեր նուիրեալներու ծառայական տրամադրութեամբ ու բոլոր-բոլորին հետ գործակցելու բարձր կորովով կը շարունակէ վառ պահել հայոց լեզուի ու մշակոյթի ցահը՝ իբրեւ կրթական եւ մշակութային յառաջատար միութիւն:

Թող մշտնջենական լոյսով ողողուին հոգիները Համազգայինի հիմնադիրներուն եւ մեզմէ առյաւէտ բաժնուած համազգայնական վաստակաշատ ընկեր-ընկերուհիներու, իսկ պատնէշի վրայ գտնուող, գործի գլուխ եղող ու մշակութային առաքելութիւն իրականացնող մեր բոլոր վարչութիւններուն ու անդամներուն կը մաղթենք ամուր ու աներեր հաւատք՝ հայութեան ոգեղէն ու ազգային բոլոր սրբութիւններուն նկատմամբ եւ աշխատանքային վերանորոգ թափ՝ հայոց ազգային մշակոյթի պանծացման ի խնդիր:

Համազգայինի Շրջանային Վարչութիւն



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Տերունաւանդ սիրով եւ ազգային պայծառ ապրումներով կ'ողջունենք 95-ամեայ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային ընկերակցութեան Արեւմտեան Ամերիկայի շրջանէն ներս հիմնադրութեան 55-րդ տարեդարձը եւ կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ազգի ու հայրենեաց կեանքին մէջ միշտ բարձր հնչէ հայկական մշակոյթի հոգեւոր եւ ազգային դօղանջը եւ անխափան շարունակուի աշխարհատարած Համազգայինի բոլոր մարմիններուն, միաւորներուն ու գեղարուեստական խումբերուն ազգանպաստ եւ մշակութանուէր գործունէութիւնը:

Արդարեւ, Համազգայինը եզակի ողջոյնի եւ յատուկ գնահատանքի արժանի միաւոր է ազգի ու հայրենիքի մշակութային եւ կրթական կեանքէն ներս: Լայն է անոր աշխատանքային դաշտը. հայոց ոգեղէն դարաւոր արժեքներէն մինչեւ հայրենեաց բարբառ ու Ոսկեղնիկի գոյգ լեզուաճիւղեր, տոհմական բարքեր ու անանդութիւններ, գիտապատմական եւ արուեստի գանազան բնագաւառներ, հայկական երգ ու պար, բանաստեղծական խօսք ու թատրոն, նկարչութիւն ու շարժապատկեր, որոնք հայերէնով կը բարբառին եւ հայութեան մասին կը պատմեն, այլեւ մեր ազգային ոգին ու համահայկական իտեալները նրբագեղ բանուածքով մը կը զօդեն իրարու՝ եւ Հայաստան-Արցախի, եւ ներքին ու արտաքին սփիւռքներու մշակութային եւ կրթական բազմաթիւ ծրագիրներու ընդմէջէն: Եւ այս բոլորը՝ հայրենեաց ու աշխարհատարած համազգայնականներու աշխատանքային շքեղ համադրումով, որ ազգի կեանքին կ'ընծայէ հայօրէն ապրելու եւ գոյատեւելու ներուժ ու մշտանորոգ ապրում՝ հայ խօսքն ու արուեստը մղելով դէպի նոր ու արդիական ուղիներ:

Յատկապէս այս իմաստով մեծապէս գովելի կը մնան մեր շրջանին մէջ գործող Համազգայինի դերն ու արձանագրած նուաճումները անցնող կէս դար եւ անելի տարիներուն՝ որոնց ընդմէջէն տեղւոյն Համազգայինը իր մասնաճիւղերով, միաւորներով ու նուիրեալներու բանակով մշակութային ու կրթական առաքելութիւն իրականացուց՝ հայ նոր սերունդները առաջնորդելով դէպի ազգային ակունքներ եւ հայկական մշակոյթ: Մօտիկ ան-

ցեալին, այս Միութիւնը մեր շրջանը գաղթող հայորդիներուն համար նաեւ եղաւ հոգեւոր ու ազգային վառարան եւ մշակութային առանցք, որուն շուրջ խմբուեցան տարբեր երկիրներու հայեր եւ կազմեցին գրականութեան, պարի, երաժշտութեան, թատրոնի եւ կերպարուեստի զանազան ճիւղերու հետզհետէ ուռճացող խումբեր, որոնք գերազանցապէս կամաւոր աշխատանքով՝ Համազգայինի աւանդապահ հայեացքները օժեցին Նոր ժամանակներու շունչով եւ բերին կարեւոր նպաստ՝ այս ափերուն հասակ առած Նոր սերունդի զաւակներն ու օտարազգի բարեկամ շրջանակները ծանօթացնելով հայկական աւանդոյթներուն, այլեւ պատմական ու ներկայ Հայաստանի դարեդար տեւող մշակոյթին: Արդար է ընդգծել, որ մեզ շրջապատող օտարները Հայն ու Հայաստանը ճանչցան նաեւ Քալիֆորնիոյ տարածքին գործող Համազգայինի մասնաճիւղերու, միաւորներու եւ արուեստի խումբերու գործունեութեանց եւ ելոյթներու ճամբով, այլեւ տեղական ու նահանգային մակարդակի զանազան տօնախմբութեանց ընթացքին անոնց բերած հայադրոշմ բարձրորակ արուեստով:

Այսօր ոսկեայ հպարտառիթ 55-ամեակն է՝ Շանթի, Աղբալեանի, Օհանջանեանի եւ Իփէկեանի պէս հայ մշակոյթի երբեմնի ոսկի գործիչներու հեռանկարային մտայնացումով ստեղծուած Համազգայինի մեծ ընտանիքի Արեւմտեան շրջանին: Արդարեւ, ոսկեայ յոբելեան եւ առաւել հինգ տարի: Բայց եւ այնպէս, համայնքային մեր կեանքի ձեւաւորման մեջ իր գնահատելի վաստակը ունեցող Համազգայինի Շրջանային Վարչութիւնը այսօր կը գտնուի ծանր կացութեան առջեւ, որովհետեւ տակաւին չունի իր սեփական շէնքը, իր հարազատ տունը: Հետեւաբար, ան մեր շրջանի անտունին է եւ մեծ կարիքաւորը, որուն պէտք է օգնութեան ձեռք երկարել, որպէսզի կարելի ըլլայ միութենական շէնքի մը սեփականատերը դառնալու համազգայնական քանի մը սերունդի երազը համայնական ճիգերով իրականացնել:

Թող որ յարատեւելու կամքով զինուած Համազգայինը մեր շրջանին մեջ արժանաւորապէս ապրի Նոր ծաղկունք բոլոր-բոլորին նիւթական զօրակցութեամբ եւ գոյատեւէ՝ իբրեւ հայապահպանման կարեւոր գործօն ու պատուաբեր Միութիւն:

Բարի Նոր 55-ամեակ ազգանուէր ու հայակեդրոն Համազգայինին: Վարձքը կատար հին ու Նոր բոլոր համազգայնականներուն, մշակութասէր կամաւորներուն եւ ազնիւ բարերարներուն:

Աղօթարար



**Թորգոմ Եպս. Տօնոյեան, Առաջնորդ
Ա.Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի**



ԱՆԵՐԵՐ ԶԱՅԱԿՐՈՒԹԵԱՆ ՄԱՂԹԱՆՔՈՎ՝ Օ՛Ն ԴԵՊԻ ԼՈՅՍ

55 տարիներ առաջ Համազգայինի նպատակին ու առաքելության հաւատացող, ու անոր գործունեության անմիջական կարիքը զգացող խումբ մը երախտաւոր ընկերներու յանդուզն քայլը յաջողութեամբ պսակուեցաւ ու անոնց տեսլականը ձեւ ու կերպարանք ստացաւ, երբ Լոս Անճելըսի մէջ ի մի եկան մշակութասեր բարեկամներ ու բարերարներ, որոնք իրենց վճռակամութեամբ եւ հայ մշակոյթին եւ կրթութեան հանդէպ խոր հաւատքով Միացեալ Նահանգներու Արեւմտեան ափին մէջ հիմը դրին Համազգայինին, որ տարուէ տարի ուռճանալով յետագային հարստացաւ 9 մասնաճիւղերով, ու տասնեակէ մը ակտիւ գեղարուեստական խումբերով ու միաւորներով:

55 տարիներ ետք, այսօր անվերապահօրէն կը հաստատենք, թէ հիմնադիրներու տեսլականը արդարացած է: Համազգայինի Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի կառոյցը, իր ինքնուրոյն տեղն ու դերակատարութիւնը ունի, աշխարհագրական հայահոծ այս տարածքին մշակութային կեանքին ու կրթական առօրեային մէջ: Սակայն պէտք է ընդգծել, որ այսօր ժամանակն ու պայմանները փոխուելով Նոր կացութիւններ սկսած են պարտադրել մեր կազմակերպութեան ու առ հասարակ մեր ժողովուրդին: Լիայոյս ենք, որ շրջանի ջանքերը՝ Համազգայինի կեդրոն մը ունենալու, յաջողութեամբ կը պսակուին:

Անցնող 3-4 տարիները դժուար էին բոլորիս համար: Համաճարակը, Արցախեան 44-օրեայ պատերազմը, Սուրիոյ պատերազմին յաջորդած տնտեսական սուր տագնապն ու ամիսներ առաջ տեղի ունեցած երկրաշարժը, Լիբանանի քաղաքական-տնտեսական քաոսային վիճակը, Պելրոլթի նաւահանգիստի պայթումը... եւ դեռ Հայաստան... Արցախ... եւ ակելին:

Դժուարութիւնները բազմացան ու դարձան բազմաբնոյթ, սակայն Համազգայինը շարունակեց իր գործունեութիւնը, վերադարձաւ իր բնականոն ժողովական կեանքին, ծրագրեց եւ կազմակերպեց մշակութային ձեռնարկներ, այս աշխատանքի ընթացքին ակներեւ էին համազգայնականներուն թափն ու ճիգը: Ակներեւ էր մասնաւորաբար Համազգայինի զանազան շրջաններու, յատկապէս Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի զօրակցութիւնն ու օգնութեան ձեռք երկարելը վերոյիշեալ տագնապներու աղետահար իրենց ընկերներուն, քոյրերուն ու եղբայրներուն, երեւոյթ մը՝ որ ակտիւ քան բարացուցական է, ու կը փաստէ, թէ՛ երբ վճռական կամքն ու

անշահախնդիր նուիրումը կը միաձուլուին նպատակները միշտ կ'ըլլան հասանելի:

Կը հաւատանք, որ ներկայ բոլոր դժուարութիւններով հանդերձ, Համագգայինը կը մնայ իր առաքելութեան ջահակիրը:

Կը շնորհաւորենք Համագգայինի Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի 55-ամեակը եւ կը մաղթենք, որ հիմնադրութեան նպատակներու ջահակրութիւնը ըլլայ աներեր, վառ պահելու կրթութեան ջահը, պահպանելու, ապրեցնելու ու տարածելու հայ մշակոյթը, հասնելու լոյսին ...

Ուրեմն, Օն դէպի լոյս:

Ուրեմն, լոյսին՝ լոյսով:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՆՈՐ ՏԵՍԻԼՔՆԵՐՈՎ ԲԵՂՄՆԱԻՐ Կ'ԸՆԹԱՆԱՆՔ ՅԱՌԱՋ

2023 տարեշրջանը կը զուգահեռի Յամազգայինի Հիմնադրութեան 95-ամեակին եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջանի մէջ Յամազգայինի հիմնադրութեան 55-ամեակին: Տարին յոբելէնական է, ուրախառիթ եւ տօնական:

Հայ մշակոյթի տիտաններէն Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան, Համօ Օհանջանեան եւ Գասպար Իփեկեան 28 Մայիս 1928-ին, Գահիրէի մէջ, հիմնեցին Յամազգային Հայ Կրթական եւ Մշակութային Ընկերակցութիւնը, որ այսօր կը գործէ եւ Հայաստան-Արցախի, եւ աշխարհի հայաշատ բազում գաղութներու մէջ: Արեւմտեան շրջանի մէջ, 1968-ին, Լոս Անճելըս գաւառին մէջ Յամազգայինը ունեցաւ իր Մայր մասնաճիւղը, եւ շուրջ տասնամեակ մը ետք՝ իր առաջին Շրջանային Վարչութիւնը: Ապա իրարայաջորդ Շրջանային վարչութիւններ Քալիֆորնիոյ հայաշատ համայնքներու մէջ յառաջացուցին նոր մասնաճիւղեր, որոնք այսօր կը գործեն Սան Ֆրանսիսքոյէն մինչեւ Ֆրեզնօ, Օրէնճ Բառնթի, Էսսինօ, Հիւսիսային Հոլիւտ, Մոնթեպելլօ, Կլենտէյլ, Փասատինա, մշակութային մթնոլորտ ու խանդավառութիւն ստեղծելով հայկական կեանքէն ներս:

Իրաւամբ, յուրախութիւն բոլորիս, որ ահա 55 տարիներէ ի վեր Քալիֆորնիոյ հայութեան կեանքին մէջ իր կարեւոր տեղն ու դերը ունի Յամազգայինը՝ գլխաւորութեամբ Շրջանային վարչութեան: Ան իբրեւ կրթական ու մշակութային միութիւն, շրջանի հայաշատ վայրերուն մէջ եւ ազգային կառոյցներու ու կազմակերպութիւններու կողքին հայ կեանքը կը հունաւորէ մշակութանուէր իր առաքելութեամբ, մասնաճիւղային աշխատանքներով, միաւորներու ծրագիրներով եւ յանձնախումբերու գործունեութեամբ, այլեւ տարբեր տարիքի պարի համոյններով, երգչախումբերով ու թատերախումբով, որոնք կը գործեն Քալիֆորնիոյ հայութեան կեանքին մէջ՝ պանծացընելով հայոց դարաւոր մշակոյթը իր բազմաբնոյթ երանգներով:

Այս բոլորին յաջողութեան մէջ մեծապէս ծափահարելի են անցեալ եւ ներկայ համազգայնական ընկեր-ընկերուհիներու եւ նիւթական, եւ բարոյական ներդրումը, անոնց ճակտի քրտինքն ու վարչական պատասխանատուութեանց գիտակցութիւնը, որոնց հանրագումարը կը կազմէ անկոտրում յամառութեամբ մինչեւ օրս շարունակուող համազգայնական ներկայութիւնը հայկական թէ օտար տօնախմբութեանց ընթացքին:

Աւելին. Արեւմտեան շրջանին մէջ հետզհետէ ուռճացող Համազգայինի մասնագիտական խումբերն ու միաւորները այսօր ամերիկածին սերունդներու մօտ հայկական ոգին վառ պահելու իտեալն է, որ կը փայփայեն եւ կ'աշխատին այդ ուղղութեամբ: Համազգայինի մշակութային ծրագիրները գերազանցապէս ուղղուած են՝ հայկական զուլալ երգն ու պարը, հայ որակաւոր թատրոնը, անհատական թէ խմբակային բարձրորակ արուեստը, այլեւ կերպարուեստի տարբեր ճիւղերն ու ազգի գրական-գեղարուեստական պաշարը, ասանդոյթները, երաժշտութիւնն ու բանաստեղծական բարձրաթիչ խօսքը աւելի կազմակերպ, ամբողջական ու կանոնակարգուած ձեւով տարածելու ու հայ մատղաշ ու երիտասարդ տղոց ու աղջկանց մէջ, հայկական ինքնութիւնը պաշտպանելու այլասերման պէս-պէս վտանգներու դէմ:

Համազգայինը կը ձգտի նաեւ համակիրներու, բարեկամներու եւ վեհանձն բարերարներու աւելի լայն շրջանակներ ներգրաւելու նպատակին, որուն իրագործման համար, ինչպէս երէկ, այսօր եւս Համազգայինը կանգնած է իր սեփական վայրը, շէնքը ունենալու հրամայականին առաջ: Երազ մը, որով անցեալ տասնամեակներուն տառապեցան իրարայաջորդ վարչութիւններն ու Համազգայինի մեծ ընտանիքը, երազ մը, որուն իրականացման համար ներկայ Շրջանային Վարչութիւնը կը շարունակէ ամէն տեսակի ջանք ու եռանդ բանեցնել եւ յոյսի ու կարելիութեանց նոր դռներ ափ առնել, ո՛չ մէկ հնարաւորութիւն կորսնցնելու համար:

Շրջանային Վարչութիւնս ոգի ի բռին կը շարունակէ հետապնդել անցեալէն ժառանգած եւ իր օրերուն մէջ շօշափելի միս ու ոսկոր ստացած հայահոծ այս շրջանի համազգայնական կարիքներուն համահունչ կառոյց ունենալու գլխաւոր տեսիլքը: Տեսիլք, որուն իրականացումով մէկ երդիքի տակ պիտի համախմբուին մատղաշ սերունդներ, աւելի եւս փարին հայ մշակոյթին ու պիտի ծնին բեղմնաւոր նոր ու արդիական տեսիլքներ:

Վստահ ենք, որ համայնական ճիգերու միացումով միայն կարելի պիտի ըլլայ իրականացնել այս երազը եւս:

Օ՛ն յառաջ դէպի մեծ երազի իրականացում եւ ոսկեայ նոր յորելեաններ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա.Մ.Նահանգներու Արեւմտեան Շրջանի
Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային
Միութեան 55-ամեակի նուիրուած այս
ՅՈՒՇ-ՊԱՏԿԵՐԱԳԻՐԸԸ
Կը հրատարակուի
ՌԻԹԱ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ
յիշատակին



Միշտ ժպտերես ընկի. Ռիթան



Հովանաւորութեամբ
Ռիթա Սապունճեան Տեմիրճեան հիմնադրամին,
Ռիթայի ամուսնոյն՝ Արփիարին եւ զաւակներուն՝
Լեւոն Շանթին ու Բալիկին

Ընկերուհի Ռիթան եղած է Համագգայինի Աւանդոյթներու Միաւորի հիմնադիրներէն մին: Ան երկար տարիներու վաստակաշատ ծառայութիւն բերած է հայ մշակոյթի տարածման եւ պահպանումին ընդհանրապէս եւ Համագգայինի գործունեութեան՝ յատկապէս: Իր ջանքերով Սարտարապատ գրախանութիւն մէջ կը կազմակերպուէին հայկական ասեղնագործութեան աշխատանոցներ եւ վարժողական դասընթացքներ, մանուկներու հեքիաթասացութեան ժամեր, ինչպէս նաեւ հայկական ձեռագործներու ցուցահանդէսներ զանազան սրահներու մէջ: Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ՀԱԿԻՐԾ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԹՈՒՎԿԱՆՍ

1968 թուական: Եգիպտոսի մեջ Համազգայինի հիմնադրութենէն 40 տարիներ ետք:

Քանի մը հայաբնակ գաղութներու թիւը սկսած էր աճ արձանագրել, մինչ ուրիշներ՝ Նոսրանալու ճամբուն վրայ կը գտնուէին: Քալիֆորնիոյ Լոս Անճելըսը սկսած էր հետզհետէ աւելի հայահոծ դառնալ եւ հայ մշակոյթով զօտեպնդուելու, ապրելու, գոյատեւելու պահանջը օրէ օր աւելի ցայտուն կը դառնար: Առ այս, Հայ մշակոյթի հանդէպ սեր տածող ու անով շնչող հայ բարեկամներ կը մէկտեղուին ու երկար խորհրդակցելէ ետք, կը մտադրեն տարբեր գաղութներու մեջ արդէն իսկ մշակութային գործունեութիւն տանող խմբակներով Համազգային Հայ Մշակութային Ընկերակցութեան մասնաճիւղ մը հիմնել Լոս Անճելըսի մեջ:

Բարենպատակ ու կառուցողական ծրագիր մը անպայման կը հասնի իր նպատակին: Մշակութասէր այս խմբակը խորհրդակցական իր վերջին հանդիպումին՝ 1968 Դեկտեմբերի սկիզբը, գործնական առաջին քայլը կ'առնէ եւ կը նշանակէ առժամեայ յանձնախումբ մը, որուն առաջնահերթ պարտականութիւնն էր՝ մշակել միութեան ծրագիրն ու կանոնագիրը, ապա՝ նախապատրաստական աշխատանքներ տանիլ ընդհանուր անդամական ժողով մը գումարելու համար:

Ծրագիր-Կանոնագրի սեւագիր մը պատրաստելէ ետք, այս յանձնախումբը ժողովի կը հրաւիրէ գաղութին ծանօթ դեմքերն ու մշակութասէր բարեկամները: Ծանօթացման եւ Համազգայինի հիմնադրութեան առաջին ժողով-հաւաքը տեղի կ'ունենայ 21 Փետրուար 1969-ին, 1501 Venice Blvd. Los Angeles հասցեագրուած՝ Լոս Անճելըսի Հայ Կեդրոնի սրահէն ներս:

13 Ապրիլ 1969-ին, Նոյն կեդրոնէն ներս կը կայանայ մասնաճիւղի անդրանիկ անդամական ժողովը՝ 110 անդամներու ներկայութեամբ: Ժողովի բացումին՝ տոբթ. Վահէ Զիւրիւբեան ներկաներուն կը փոխանցէ «Համազգային»ի նպատակն ու ի գործ դրուելիք ծրագիրները, իսկ Բաբգէն Սասունին կը զեկուցէ մինչեւ ընդհանուր ժողովի կայանալը տեղի ունեցած խորհրդակցական հանդիպումներու մասին, ուրկէ ծնունդ կ'առնէ Լոս Անճելըսի Համազգայինի մասնաճիւղը եւ կը մշակուի ու բաւական կը բիւրեղանայ անոր Ծրագիր-Կանոնագրի նախագիծը:

Այնուհետեւ, Լոս Անճելըսի մասնաճիւղի Ընդհանուր ժողովը կ'ընտրէ 1969-1970 տարեշրջանի իր անդրանիկ վարչութիւնը, ապա անոր դիւանը հետեւեալ ձեւով.-

- Տոբթ. Վահէ Զիւրիւբեան - Նախագահ
- Պրն. Բաբգէն Սասունի - Փոխ Նախագահ եւ Զարտուղար
- Պրն. Պետրոս Ալահայտոյեան - Զարտուղար
- Տոբթ. Հրայր Աթիկեան - Զարտուղար (անգլերէնով)
- Պրն. Պարգեւ Մկրտիչեան - Գանձապահ

Տեարք Յակոբ Ինճեճիկեան, Արա Մանաշ, Յակոբ Մանճիկեան, Յակոբ Մելքոնեան եւ Չոհրապ Շամմասեան՝ խորհրդականներ:

Այս վարչական կազմը իր գործունեութիւնը շարունակած է 1970-1971 տարեշրջանին եւս:

1970-ականներէն մինչեւ 80-ական թուականները, Միջին Արեւելքի ու Պարսկաստանի քաղաքական եւ տնտեսական ծանօթ տազնապներու հետեւանքով, հայահոժ այս գաղութներու հայորդիները մեծաւ մասամբ հաստատուեցան Արեւմտեան Ամերիկա եւ գաղութին կազմակերպումը դարձուցին հրամայական:

1980-ին, Կեդրոնական վարչութեան թելադրութեամբ, Գուրգէն Գասապեան խորհրդակցական ժողովներու կը հրաւիրէ մինչ այդ գործող մասնաճիւղերը: 12 Յունուար 1981-ին գումարուած երրորդ խորհրդակցական ժողովին կը յայտարարուի առաջին Շրջանային վարչութեան նշանակովի կազմը, որուն ատենապետութիւնը կը ստանձնէ Գուրգէն Գասապեան: Աւելի ուշ, նշանակովի այս վարչութեան հրաւերով, կը գումարուի Առաջին Պատգամաւորական ժողովը, որուն ներկայ կ'ըլլան 40 պատգամաւորներ եւ 7 մասնաճիւղերէ լիազօր ներկայացուցիչներ: (Վարչութեանց ցանկերը տեսնել յաջորդ էջերով):

Հիմնադիր ու յաջորդող Շրջանային վարչութիւնները անսկուն ջանքերով կազմակերպած են փառատօներ, յոբելէնական հանդիսութիւններ, գիրքերու հրատարակութիւններ: Գոյութիւն ունեցող՝ Լոս Անճելըսի (1968), Սան Ֆրանսիսքոյի (1974) եւ Կլէնտէյի (1976) մասնաճիւղերու կողքին, ծնունդ առած են Ֆրեզնոյի (1981), Ղովիտի (Էնսիւս 1982), Մոնթեպելոյի (1982-1995, վերակազմակերպուած 2019-ին), Փասատիսայի (1985), Լա Զրէսէնթայի (1992-2000, ապա՝ միացած Կլէնտէյի), Պըրպէնքի (1992-2000, ապա՝ միացած Կլէնտէյի) եւ Օրէնճ Բաունթիի (1993) մասնաճիւղերը:

1978-ին «Անի» պարախումբը կը միանայ Համազգայինին. 1987-ին կեանքի կը կոչուի երաժշտական միաւորը, որ ընդարձակ գործունեութիւն կը ծաւալէ շրջանէն ներս, ապա Արուեստի ու Արդի, ինչպէս նաեւ հայկական ժող-գործիքներու միաւորները, աւելի ուշ՝ Թատերական (2001), Աւանդոյթներու (2002) միաւորները, որոնց գործօն ու որակեալ ներկայութեամբ գաղութը կ'արձանագրէ մշակութային մեծ վերելք:

Վերել նշուած վարչական թէ կազմակերպական բոլոր աշխատանքները (փորձեր, ժողովատեղի) սկզբնական շրջանին կատարուած են յաճախ վարչականներու բնակարաններու, ապա եւ մինչեւ օրս՝ հայ կեդրոններու սրահներու մէջ:

Համազգայինը՝ իր 55-րդ ամեակը կը տօնախմբէ հարստացած նոր ճիւղաւորումներով, երգչախմբային եւ պարային պատանեաց նոր խումբերով, արուեստի եւ լեզուի նոր դասընթացքներով, սակայն՝ «անտուն», առանց իր սեփական կեդրոնը ունենալու: Այսուհանդերձ, հայահոժ այս շրջանի ներուժէն զօրացած, Համազգայինը անվրիհատ կամքով կը նայի գալիքին, իր յառաջիկայ գործունեութեան մէջ հրամայական դարձուցած մշակութային կեդրոնի ծրագիրն ու զայն Համազգայինի սեփականութիւնը դարձնելը:

Մենք յաւերժ ենք մեր մշակոյթով:

Եւ մշակոյթի մեր սեփական տունը երաշխիքն է մեր աւելի եւս ծաղկումին ու բարգաւաճման:

HAMAZKAYIN
ARMENIAN EDUCATIONAL & CULTURAL SOCIETY



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Չիմնադրութիւն: 28 Մայիս 1928, Գահիրէ
1947-ին Կը փոխադրուի Լիբանան
Ա. Պատգամաւորական Ժողով՝ Օգոստոս 1990-ին,
Աթէնք, Յունաստան

* * *

ՇՐՋԱՆՆԵՐ

Ա. Մ. Նահանգներու Արեւելեան Շրջան
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Շրջան
Աւստրալիա
Գանատա
Լիբանան
Յունաստան
Սուրիա

ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆՆԵՐ

Իսի-լէ Մուլիօ
Լոնտոն
Մարսէյ
Մոնթեվիտէօ
Նիկոսիա
Պուէնոս Այրէս

Սան Փաուլօ
Սթոքհոլմ
Վալանս
Փարիզ
Բուէյթ

Ռուսիա (Մոսկուա եւ Սան Փէթերբուրկ)

ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

Լիբանան (Կեդրոնական Վարչութեան Նստավայր)
Հայաստան
Արցախ
Զաւախք

ԿԱՌՈՅՑՆԵՐ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. ԵՒ Հ. Արսլանեան ճեմարան
Մարսէյի ճեմարան
Համազգային Թարգմանչաց Վարժարան
Ա. ԵՒ Ս. Գոլստըն ճեմարան

HAMAZKAYIN
ARMENIAN EDUCATIONAL & CULTURAL SOCIETY



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ՎԱՅԷ ՍԵԹԵԱՆ Տպարան -Գրատուն
Մանկական Խաղերու Բաժանմունք

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

ԲԱԳԻՆ Գրական -Անդրանիկ թիւ Յունուար 1962-ին
Վարիչ Ա. Խմբագիր Կարո Սասունի
Խմբագիրներ՝ Եղուարդ Պոյաճեան
Եւ Պօղոս Մնապեան

«Լիւսի Թիւթիւնճեան» Յուլցասրահ
Համազգայինի Հիմնադրամներու Մարմին՝
Լիբանան Եւ Ամերիկա

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ՖՈՐՈՒՄ

(1995-Էն սկսեալ Լիբանանի մէջ, 2004-Էն ետք
Հայաստանի մէջ)

YOUTH LINKS

Եւրոպա

ԱՐԹԼԻՆԸՍ

Ա.Ս. Ն. Արեւմտեան Եւ Արեւելեան Շրջաններ
Եւ Գանատա

Հ - ԲԵՍ



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Ա.Ս.ՆԱՀԱՆԳԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ
(Հիմնադրուած 1968-ին)**

Անդրանիկ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ կազմ 1980-ին
Գուրգէն Գասապեան, Ատենապետ

ՄԱՍՆԱԾԻՂԵՐ

Լուս Անճելլոսի «Յովհաննէս Շիրազ» Մասնաճիւղ
Հիմնադրուած 1968-ին, Ա. Ատենապետ՝
Վահէ Զիւրիւբեան, դադրած 1981-ին

Սան Ֆրանսիսքոյի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղ
Հիմնադրուած 1974-ին, Ա. Ատենապետ՝
Խաժակ Սարգիսեան

Կլենտէյի «Յովհաննէս Թումանեան» Մասնաճիւղ
Հիմնադրուած 1976-ին, Ա. Ատենապետ՝
Նահապետ Մելքոնեան

Ֆրեզնոյի «Դանիէլ Վարուժան» Մասնաճիւղ
Հիմնադրուած 1981-ին, Ա. Ատենապետ՝
Նշան Յովսէփեան

**Սան Ֆերնանտո Հարաւային Հովիտի
«Պարոյր Սեւակ» Մասնաճիւղ-Էնսիսո**
Հիմնադրուած 1982-ին, Ա. Ատենապետ՝
Մարտիկ Կապուտեան

Փասատիւայի «Շահան Շահնուր» Մասնաճիւղ
Հիմնադրուած 1985-ին, Ա. Ատենապետ՝
Իսկուհի Խաչերեան

Օրէնճ Զաունթի «Սիամանթո» Մասնաճիւղ
Հիմնադրուած 1993-ին, Ա. Ատենապետ՝
Կարօ Յակոբեան

**Սան Ֆերնանտո Հիւսիսային Հովիտի
«Լէւոն Շանթ» Մասնաճիւղ- Չէթսուըրթ**
Հիմնադրուած 2015-ին, Ա. Ատենապետ՝
Մարալ Դարբինեան

Մոնթեպելլոյի Մասնաճիւղ
Հիմնադրուած 1982-ին, (դադրած 1991-ին),
Ա. Ատենապետ՝ Բիւզանդ Սեմերճեան
Վերահաստատուած 2019-ին,
«Մուշեղ Իշխան» անուամբ
Ա. Ատենապետուհի Չեփիւռ Սարճեան



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Ա.Ս.ՆԱՀԱՆԳԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ
(Հիմնադրուած 1968-ին)

**Համազգայինը ունեցած է նաեւ՝
Քրեսէնթա Հովիտի «Արշիլ Կորթի»
եւ Պըրպէնքի Մասնաճիւղերը,**

որոնք հիմնուած են 1992-ին, սակայն 2000-ին թիւի
նուագումի հետեւանքով դադրած են անջատաբար
շարունակելէ իրենց գործունեութիւնը եւ
միացած են Կլենտէյի մասնաճիւղին

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԾԻԴԵՐ (ՄԻԱԴՈՐՆԵՐ)
ԱՆԻ Պարախումբ**

Հիմնադրութիւն՝ 1973-ին, հիմնադիրներ՝
Եղիա Հաշօլեան եւ Սիւզի Դարբինեան

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻԱԴՈՐ
Հիմնադրութիւն՝ 1987-ին

ԱԲԱՆԴՈՅԹՆԵՐՈՒ ՄԻԱԴՈՐ
Հիմնադրութիւն՝ 2002-ին,
Հիմնադիրներ՝ Ռիթա Սապունճեան Տեմիրճեան
եւ Շուշիկ Ասլանեան

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ ԵՐԳՉԱՆՈՒՄԲ

Հիմնադրութիւն՝ 2009-ին, խմբավար՝
Նորա Ռումեան
Վերակազմուած 2017-ին, խմբավար՝
Գայեանէ Աւետիսեան

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱԴՈՐ

Կազմուած 2015-ին, Ա. Ատենապետ՝
Նարկիզ Թերզեան

ԳՐԱԿԱՆ ՄԻԱԴՈՐ

Հիմնադրութիւն՝ 2015-ին, Ա. Ատենապետ՝
Մակի Պապիկեան

ՍԱՐԵԱՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ՄԻԱԴՈՐ

Հիմնադրութիւն՝ 2015-ին, Ա. Ատենապետ՝
Ատուր Աղճայեան

Համազգայինը ունեցած է նաեւ՝
Արթի Երիտասարդական ու Արփա Երգչախմբային
միաւորներն ու Գրականի Հպարտ Հայորդիներ
խմբակը, որոնք ներկայիս չեն գործեր:

1980 ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ


1968 թուականին սկսեալ Զայիֆորնիոյ զանազան շրջաններուն մէջ սկսած էին հաստատուիլ «Համազգային»ի մասնաճիւղեր՝ Լոս Անճելըս, Կլենտէյլ եւ Սան Ֆրանսիսքօ: 1980ին Կեդրոնական Վարչութեան Նախաձեռնութեամբ, Արեւմտեան Ամերիկայի գործունէութիւնը ծաւալելու նպատակով կը զուարթուի ժողով մը եւ կ'ընտրուի առաջին Շրջանային Վարչութիւնը հետեւեալ կազմով՝

Գուրգէն Գասապեան	Ատենապետ
Յակոբ Ինճեճիկեան	Փոխ Ատենապետ
Ռիթա Որբերեան	Քարտուղարուհի
Կարօ Պետրոսեան	Ատենադպիր
Պետրոս Ալահայտոյեան	Գանձապահ
Ռուպինա Բագրատունի	Խորհրդական
Եղուարդ Մսրըլեան	Խորհրդական (Սան Ֆրանսիսքօ)
Նշան Յովսէփեան	Խորհրդական (Ֆրեզնօ)
Ժիրայր Պոյաճեան	Խորհրդական
Մարտօին Սասունի	Խորհրդական
Վարուժան Տեմիրճեան	Խորհրդական

Լստած ձախէն աջ՝ Ռուպինա Բագրատունի, Ռիթա Որբերեան, Գուրգէն Գասապեան, Մարտօին Սասունի, Կարօ Պետրոսեան

Ոտքի ձախէն աջ՝ Յակոբ Ինճեճիկեան, Ժիրայր Պոյաճեան, Պետրոս Ալահայտոյեան, Վարուժան Տեմիրճեան





**Բաբգեն Սասունի, Կեդրոնական Վարչութեան
Ներկայացուցիչ, Գուրգեն Գասապեան, Հրայր
Աւետեան եւ Նորա Իւլպէյեան**



**Պատգամաւորներուն
մէկ մասը, Ընդհանուր Ժողովի Դիւանի
Ատենադպիր՝ Հրայր Աւետեան**



**Առաջին Շ.Վ.ն հրաւիրած Պատգամաւորական Ժողովին
բացումը, Շ.Վ.ն ատենապետ՝ Գուրգեն Գասապեանի կողմէ:
Զախին Պետրոս Ալահայտոյեան, Ժիրայր Պոյաճեան,
Ռիթա Որբերեան եւ Կարո Պետրոսեան**



**Շրջանային Վարչութեան Հանդիպումը
Սիմոն Սիմոնեանի Հետ**

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԵՐ 1980 - 2023

Անդրանիկ Շրջանային Վարչություն 1980-1982

Գուրգեն Գասապեան
Յակոբ Ինճեճիկեան
Կարո Պետրոսեան
Ռիթա Որբերեան

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Ատենադպիր
Թղթակից եւ
Քարտուղար
Գանձապահ
Ծրագիր-

Պետրոս Ալահայտոյեան
Վարուժան Տեմիրճեան
Կանոնագրի Վերամշակման Պոսիստ.
Մարժօլին Սասունի
Ռուպինա Բագրատունի

Խորհրդական
Խորհրդական

1982-1984

Գուրգեն Գասապեան
Վարուժան Տեմիրճեան
Լեւոն Գասպարեան
Մարժօլին Սասունի
Պետրոս Ալահայտոյեան
Ռուպինա Բագրատունի
Դոկտ. Օննիկ Թէշիշեան
Եղուարդ Մսրըլեան
Լշան Յովսէփեան

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Քարտուղար
Ատենադպիր
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

1985

Դոկտ. Օննիկ Թէշիշեան
Կարո Պետրոսեան
Լշան Յովսէփեան

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Քարտուղար

Անահիտ Մարգարեան
Ոսկան Գինեան
Լեւոն Գասպարեան
Ռուպինա Բագրատունի
Սրբուհի Մսրըլեան
Վահէ Օշական

1986

Գուրգեն Գասապեան
Յրայր Աւետեան
Վահէ Գապագեան
Ատուր Աղճայեան
Գրիգոր Ալաճաճեան
Անահիտ Աճունեան
Ոսկան Գինեան
Յարութ Պալեան
Եղուարդ Մկրտիչեան

1987-1989

Գուրգեն Գասապեան
Վահէ Գապագեան
Ատուր Աղճայեան
Գրիգոր Ալաճաճեան
Անահիտ Աճունեան
Ոսկան Գինեան
Յարութ Պալեան
Եղուարդ Մկրտիչեան
Ծաղիկ Կիրճեան

Ատենադպիր
Փ. Ատնդար
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Ատենադպիր
Գանձապահ
Քարտուղար
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

Ատենապետ
Ատենադպիր
Գանձապահ
Քարտուղար
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

1989-1991

Վարուժան Տեմիրճեան
 ճորճ Աբելեան
 Կատիա Զուլչերեան
 Մանուկ Զուխաճեան
 Վարդի Եղլեան
 Չարեհ Մարգարեան
 Ստեփան Պայրամեան
 Անի Թորիկեան (*)
 Եղուարդ Մսրրլեան (**)
 Սրբուհի Մսրրլեան

Ատենապետ
 Փ. Ատնպտ.
 Ատենադպիր
 Գանձապահ
 Գոյթապահ
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական

() 1991 Մայիսին կազմին կը միանայ, բայց կարճ ժամանակ ետք վերադառնալով Լիբանան Անին կը դադորի Շրջանային Վարչութենէն:*

*(**) 1992-ի աշնան, Եղուարդ Մսրրլեանին*

(Սան Ֆրանսիսքոյէն) կը փոխարինէ Յարութիւն Պալեանը:

1991-1993

Հրաչ Սիմոնեան
 Վարդուհի Զուլչերեան
 Օննիկ Հայրապետեան
 Արփի Շանթ
 Չարեհ Մարգարեան
 Վաչէ Ագարակեան
 Րաֆֆի Մանուկեան
 Եղուարդ ճուհարեան
 Խոսրով Ասոյեան
 Լ. Մարգարեան
 Հրայր Շահինեան

Ատենապետ
 Քարտուղար
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական

1995-1997

Տօթթ. Միեր Պապեան
 Արփի Շանթ

Ատենապետ
 Ատենադպիր

Յակոբ Կեօվճեհիզեան
 Արմինէ Շերիքեան
 Ռիթա Եղիայեան
 Վարազդատ Մարգարեան
 Անի Մահսերճեան
 Վահագն Աբգարեան

Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական

1997-1999

Յակոբ Կեօվճեհիզեան
 Ռիթա Մահսեւեան
 Կատիա Զուլչերեան
 Յակոբ Օվայեան
 Վահագն Աբգարեան
 Վարազդատ Մարգարեան
 Յովիկ Խաչատուրեան
 Տիգրան Եփրեմեան

Ատենապետ
 Փ. Ատնպտ.
 Ատենադպիր
 Քարտուղար
 Գանձապահ
 Գոյթապահ
 Խորհրդական
 Խորհրդական

1999-2001

Հրայր Կարապետեան
 Ժուլիէթ Դաւիթեան
 Յովիկ Խաչատուրեան
 Հրայր Շերիքեան
 Թային Չոմճեան
 Արա Գեորգեան
 Լեւոն Իսահակ

Ատենապետ
 Ատենադպիր
 Փ. Ատենապետ
 Գանձապահ
 Խորհրդական
 Խորհրդական
 Խորհրդական

2001-2003

Վահագն Աբգարեան
 Գեորգ Պետիկեան
 Մարո Թիւթէլեան,
 Մարգար Մարգարեան
 Վարազդատ Մարգարեան

Ատենապետ
 Քարտուղար
 Խորհրդական
 Խորհրդական

2003-2005

Վահագն Աբգարեանց
Վարազդատ Մարգարեան
Մարո Թիվթէլեան
Գեորգ Պետիկեան
Մանուկ Չուխաճեան
Արմէն Շամամեան (Յրաժարած)
Մարգար Մարտիրոսեան
Օննիկ Հայրապետեան
Շաբէ Յովակիմեան

Ատենապետ
Փ. Ատենապետ
Ատենադպիր
Քարտուղար
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

2005-2007

Հրայր Շերիքեան
Դոկտ. Տիգրան Պապիկեան
Վահան Եահյէեան
Մանուկ Չուխաճեան
Րոժէ Խատարեան
Սիւզի Օհանեան
Պետրոս Փոստոյեան

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Ատենադպիր
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

2007-2009

Դոկտ. Վիգէն Եագուպեան
Դոկտ. Տիգրան Պապիկեան
Անիթա Հաւարթեան
Օհան Օհանեան
Մանուկ Չուխաճեան
Սագօ Պերպերեան
Թամար Աբգարեան
Գեորգ Պետիկեան
Ծովինար Մելքոնեան

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Ատենադպիր
Հաշուապահ
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական
Քարտուղար
Խորհրդական

2009-2011

Դոկտ. Վիգէն Եագուպեան(*)
Օհան Օհանեան

Ատենապետ
Ատենապետ

Դոկտ. Տիգրան Պապիկեան
Անիթա Հաւարթեան
Օհան Օհանեան
Վիգէն Հապոյեան
Մանիշակ Մարգարեան
Լիւսի Չուխաճեան
Ծովինար Մելքոնեան
Միրնա Տուզճեան

Փ. Ատնպտ.
Ատենադպիր
Գանձապահ
Հաշուապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

() Դոկտ. Վիգէն Եագուպեան 2010-ին կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ մնացեալ ամիսներուն ընթացքին ատենապետութիւնը կը ստանձնէ Օհան Օհանեան*

2011-2013

Ռոժէ Խատարեան
Ծովինար Մելքոնեան
Լիւսի Չուխաճեան
Չուկի Կետիկեան
Մարիա Խարաճեան
Սօնիկ Յարութիւնեան
Միրնա Տիւզճեան
Լորի Թաթուլեան
Անի Պողիկեան
Սերբօ Խաչատուրեան

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Ատենադպիր
Գանձապահ
Հաշուապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

2013-2015

Մանուկ Չուխաճեան
Լորի Թաթուլեան
Անիթա Հաւարթեան
Չուկի Կետիկեան
Ժագ Արմուտիքեան
Օհան Օհանեան
Նորա Եագուպեան

Ատենապետ
Փ. Ատնպտ.
Ատենադպիր
Հաշուապահ
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական

2015-2017

Մանուկ Չուխաճեան
Անիթա Յաւարթեան
Սեդա Ֆրունճեան
Րոժէ Խատարեան
Մակի Իսթիլեան
Ռաֆֆի Յարպոյեան
Նարեկ Ալեքսանտրեան
Մկո Փանոսեան
Արա Բետրոյլեան

Ատենապետ
Ատենադպիր
Յաշուապահ
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

2017-2019

Սեդա Սիմոնեան
Արա Գազանճեան (իրաժարած)
Սեդա Ֆրունճեան
Վիլմա Գոյունճեան
Լիւսի Չուխաճեան
Մակի Պապիկեան
Յրաչ Թաշճեան
Արփի Ճիւրեան
Վանիա Պապիկեան
Զնար Գորթոշեան(*)
() Նշանակուած, կը փոխարինէ Արա Գազանճեանին*

Ատենապետ
Ատենադպիր
Գանձապահ
Յաշուապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

2019-2022

Զնար Գորթոշեան

Լիւսի Չուխաճեան
Վարդուկ Կարապետեան (Յրաժարած)
Վիլմա Գոյունճեան
Սեդա Գրիգորեան
Արփի Ճիւրեան
Վանիա Պապիկեան
Գարմէն Լիպարիտեան
Միշէլ Սաֆարեան

Ատենապետ
Եւ Գանձապահ
Ատենադպիր
Գանձապահ
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական

2022-2024

Զնար Գորթոշեան
Վիգէն Յարպոյեան
Սեդա Գրիգորեան
Բիւրակ Մոմճեան
Շուշիկ Արսլանեան
Մարալ Թուլումեան (Նշանակուած)
Յովիկ Սերայտարեան (Նշանակուած)

Ատենապետ
Յաշուապահ
Զարտուղար
Կայքէջ, Յարաբերական Եւ IT
Խորհրդական
Խորհրդական
Խորհրդական


**2022-2024
Շրջանային Վարչութեան Կազմ**

Ձախէն աջ՝ Բիւրակ Մոմճեան, Մարալ Թուլումեան, Վիգէն Յարպոյեան, Զնար Գորթոշեան, Շուշիկ Արսլանեան, Յովիկ Սերայտարեան, Սեդա Գրիգորեան





2009 Շրջանային Վարչութիւնը
վաստակաշատ ընկերներու հանդիպման մը



Տօթթ. Եղիկ Գոնետալեան կ'ողջունէ
Խմբավար Յովիկ Գասպարեան

2007 Մասնաճիւղերու Վարչութեանց հետ հանդիպում



Վարուժան Տեմիրճեան, Տօթթ. Սիեր
Պապեան եւ Չարեհ Մարգարեան



1994 Շրջանային
Վարչութեան Կազմ

1994-ի Ընդհանուր
Ժողովի աւարտին





13 Մարտ, 2019
ՀՕՄ-ի Կեդրոն, «Կամաւորներու Շաբաթ»ի Տօն



June, 2023 - Artlink, Camp Arev, with the Tri-Regional Board members



Մարտ, 2019 - Մեր Նախկին Կեդրոնը հաւաքելու աշխատանքները

2022 Շրջանային Վարչութիւն Ատենապետ Զնար Գործոշէան





**2018 Շրջանային Վարչութիւն,
Ատենապետ Սեդա Սիմոնեան**



2003 - 75-ամեակի Կազմակերպիչ Յանձնախումբ

**29 Սեպտեմբեր, 2019
Տոհմիկ Օր, Սեդա Գրիգորեան
եւ Արփի Համբարեան:
Այս ձեռնարկի հասոյթով
կը հաստատուի Նոր Կեդրոնի
Ֆունդը:**



Արդիւ Տօճ. Էդիլ:

Տիրապետել կուսումնաբանական և մշակութային կարգապահութեան: Տիրապետել կուսակցական կարգապահութեան «պատկար» զիստ օրը կամ շաբաթը մը: Այս գիտելով ունիտի հետ կարելի է գրել: Ինչ անհամարժեքութիւն ձեռք-կարգել է:

	Կարգ	Շահ
1.	→ ①	 = 9/10 շէր
6.	→ ②	 = 8/10 "
5.	→ ③	 = 7/10 "
2.	→ ⑤	 = 4/10 "
3.	→ ②	 = 8/10 "
4.	→ ④	 = 5/10 "
7.	→ ⑤	 = 4/10 "

Vacant Alexandrian



Մեր Բնիւթ Եւ Մեր Մտայնթոճ

Նախաձեռնութեամբ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱԼ
ԱՐԵՒՄՏԵԱԼ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԱՆԱՅԻ ՎԱՐՈՒԹԵԱԼ

ՏՈՂՄԻԿ ԵՐԵԿՈՅԹ

Հայկական ճաշացուցակ, տունական մթնոլորտ:

Կիրակի, 29 Մեյուն
Փասար
740 East Wa

Մտայն կտր
\$100



BEIRUT

BENEFIT CONCERT • FEATURING ARMENIAN ARTISTS FROM ALL OVER THE WORLD

SATURDAY, SEPTEMBER 19, 2010 • 7PM PACIFIC TIME
LIVE ON TV ON ASBAZE.COM • HAMAZKAYIN HARTAG ON FACEBOOK • HAMAZKAYIN.TV ON YOUTUBE

DONATE BY PHONE: 818-514-1069

HORIZONARTV.COM FACEBOOK.COM / HAMAZKAYINHARTAG

HAY HORIZON ON FACEBOOK ASBAZE FACEBOOK PAGE

HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL & CULTURAL SOCIETY
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱԼ
WESTERN REGION - Established in 1968

MISSION: Advance and promote in the Armenian and American communities the Armenian culture including but not restricted to the Armenian language, the Armenian History, the Armenian literature, the Armenian theatrical arts, the Armenian folkloric dances and the Armenian Music.

EVENTS ORGANIZED IN 2019
by the REGIONAL EXECUTIVE, it's 8 CHAPTERS and 9 MIAVOR

JANUARY 2019

- 12th Gathering to welcome the New Year 2019 by Regional Executive

FEBRUARY 2019

- 16th Gomidas Choir Concert - by Taniel Varojujan chapter
- 18-24th A play "The Adventures of Chi Gareli" by Theatre MIAVOR

MARCH 2019

- 3rd Parentent Gala- by Heritage MIAVOR
- 8th "An evening with Vehavansh Tokian" by Nigol Aghpalian chapter
- 16-17th General meeting by Regional Executive
- 19th "Toight Ar Yevansh" - English by Literary MIAVOR
- 22nd Maestro Hovhannes Tchekidjian 90' B-day celebration by Regional Exec.
- 28th "Khimyan Hayig" monologue by Slammto chapter
- 30th "Khimyan Hayig" monologue by Shahan Shahour chapter

APRIL 2019

- 12th Arpa Choir is established as Toumanian chapter MIAVOR by Regional Executive
- 15th Moushgh Ishkhan chapter, Moushgh re-established by Regional Executive
- 22nd Annual concert- Sayat Nova Choir
- 27th Luncheon to benefit Levon Shant's "Old Gods" Ballet- by Musical MIAVOR
- 28th Matthew Karanian's "The Armenian Highland" book presentation by H. Toumanian chapter and "An evening about Akopy" by Slammto chapter

MAY 2019

- 31st "The Music of Sayat Nova" by Literary MIAVOR's "Ibard Hayotiner" Cont.

JUNE 2019

- 1st Hamshenahayer by Literary MIAVOR's "Ibard Hayotiner" Cont.
- 28th "Alabina" by Barut Sevag chapter
- 30th "Mez Drum Circle" by Artee Youth

AUGUST 2019

- 2nd "Gibsy Kings" by Barut Sevag chapter
- 7th Book Club "Hovhannes Toumanian" by Literary MIAVOR
- 16th "Art Night" by Levon Shant Chapter

SEPTEMBER 2009

- 4th Book Club "Apel Pagomen" by Literary MIAVOR
- 14th Gen. Advisory Meeting with all chapters and committees Regional Executive
- 19th Gima Giragossian's "Garodakhdje Pousjoun Choom" book presentation by the Literary MIAVOR
- 21st "The Adventures of Chi Gareli" - by Theatre MIAVOR
- 29th Annual event "An Evening of Tradition- Dohmg Day" by Regional Executive

OCTOBER 2019

- 2nd Book Club "Silva Gaboussigian" by Literary MIAVOR
- 3rd E. Redjian's book presentation "Yes Desa Anin" by Literary MIAVOR
- 4th 150th Anniversary celebration of Levon Shant- Levon Shant Chapter
- 5th "The First Armenian Antiques Road Show" by Barut Sevag, Shahan Shahour and H. Toumanian chapters with Armenian Numismatic and Antiquities Society.
- 8th "The Stateless Diplomat" documentary presentation-Taniel Varojujan chapter
- 24th "Hye Mikhrastarian Dughastoutouyoun" - Nerair Dadourian by Literary MIAVOR
- 27th "New Talents - dedicated to 'Year of Armenian Media' and to benefit 'Asbarez', by Barut Sevag & Levon Shant chapters with local ARS chapters & Unique presentation of Armesopis city built by Romanian Armenians from scratch by Taniel Varojujan chapter

NOVEMBER 2019

- 3rd 4th Annual Art Exhibition by Levon Shant chapter & Movie Screening of "Kendogal 44" by Hovhannes Toumanian chapter
- 6th Book Club "Kevork Emin" by Literary MIAVOR
- 7th Meeting with Avedis Hujian "The Secret Nation" by Regional & Literary
- 16-17th "A journey through Armenian Paintings" by Nigol Aghpalian chapter
- 17th Dr. Varan Tablian's "Andoumim" book presentation by Literary MIAVOR
- 24th Seven Bedourian "Araknadench Horizontner" book Presentation with participation of Kenah Educational Society by Literary MIAVOR & "Naiyan" Dance Group - by Barut Sevag chapter
- 27th "Laverji Jamposte" Kevork Emin by Literary MIAVOR

DECEMBER 2019

- 6th "The Stateless Diplomat" documentary by Shahan Shahour chapter
- 7th ANI Dance Group 45th anniversary celebration ANI Dance Group
- 8th 150th anniversary celebration of Gomidas, H. Toumanian, L. Shant & Y. Odian by Regional & Taline's Christmas Concert" by Taniel Varojujan chapter
- 12th Participation in "Round Table Discussion" organized by ARS Regional
- 21st "The Speakeary BEIRUT" - by Artee Youth.

As of JUNE 2019, CHILDREN'S ART, CHOIR, DANCE, and YOUTH CHOIR CLASSES as of SEPTEMBER 2019, "KRAPAR" classes each once a week, at Hamazkayin Center.

407 East Colorado Street, Glendale, CA 91205- HamazkayinWR@gmail.com



Համազգայինի Շրջանային Վարչությունն ու Կեդրոնական Վարչության մօտ ներկայացուցիչ Մանուկ Չուխաճեան, Համազգայինի կեդրոնին մեջ, ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկեր Յակոբ Տեր Խաչատուրեանի եւ Կ.Կ.-ի ընկերներու հետ:



Ուղեկից միութիւններու հանդիպում ընկեր Իշխան Սաղաթելեանի հետ, ՀՕՄ-ի կեդրոն:

2019 նորընտիր Շրջանային Վարչություն



**Հոկտեմբեր, 2022 - Յաջող ձեռնարկի աւարտին,
Փասատինա**

**30 April 2019
LA City Council member Paul Kerkorian presenting
Hamazkayin a proclamation for its Cultural Mission**



**31 Մարտ, 2021
«Եկեք Հաց Թխենք» Չուխաճեաններուն
ընակարանը**



2023, June - ArtLink, Camp Arev



Լոյեմբեր, 2018
Վեհանոյշ Թեբեանի 75-ամեակի տոնախմբութիւն,
Բաւաստեղծ Ժագ Յակոբեանի հետ



26 Յունիս, 2023
Արցախի Համազգայինի Գրասենեակի Տնօրէն
Ընկ. Զերմինէ Աւագեանի հետ



29 Մայիս, 2022
9-րդ Պատգամաւորական Ժողով,
Երեւան



**Արեւմտեան Ամերիկայի Համազգայինի Հիմնադիրներէն
Ընկ. Վարուժան Տեմիրճեանին հետ**



**13 Դեկտեմբեր, 2019
Լեւոն Շանթի «Հին Աստուածները»
պալէի ի նպաստ ճաշկերոյթ**

**24 Նոյեմբեր, 2019
Համազգայինի Գրական Յնձիւմբ.
Երեցկին Սեւան Պետուրեանի
«Արեգնատենչ Հորիզոններ»
բանաստեղծական հատորի
ներկայացում
(Լոս Անճելըսի Զեսապի
Ոսումնասիրաց
Միութեան Կեդրոն)**





1 Մարտ, 2019
ԱԼՕ Հաճեանի հետ, Բագինի խմբագրակազմի անդամ



Տօթթ. Լուսինէ Սահակեանի հետ, Համշէնահայերու
մասին ծրագրի աւարտին



30 Մարտ, 2019
Համազգայինի Արեւմտեան, Արեւելեան
եւ Գանատայի Շրջանային Վարչութեանց
ներկայացուցիչներ կ'այցելեն Ազգ. Առաջնորդարան
եւ հանդիպում կ'ունենան Առաջնորդ Սուշեղ Արք.
Սարտիրոսեանին եւ Ազգ. Վարչութեան հետ:



Երգահան Երուանդ Սիրզոյեանի
եւ երաժշտագետ Պետրոս Ալահայտոյեանի հետ



12 Փետրուար, 2022
Շրջանային Ընդհանուր Ժողովի
մասնակիցները



3 Ապրիլ, 2023
Հանդիպում Գագիկ Գինոսյանի հետ



24 Մարտ, 2019
Խմբավար եւ Երգահան Յովհաննես Չեքիճեանի հետ



Տիանա Աբգարի թոռնուհին՝ Միմի Մալայեան եւ Լոս Անճելըսի Հայաստանի Գլխավոր Հիւպատոս Դոկտ. Բայբուրթեան, Աբգարի Ֆիլմին ցուցադրութեան

8 Դեկտեմբեր, 2019 - Կոմիտասի, Օտեանի եւ Թումանեանի 150-ամեակին նուիրուած ձեռնարկին՝ Վարդան Պերպերեանին հետ



17 Մարտ, 2019 - Համազգայինի Եռակողմանի Շրջանային Վարչութիւններու հանդիպում

2011 - Վաստակաշատ ընկերներու
գնահատանքի երեկոյ:



Կը գնահատուի Բարգէն Սասունի:



Կը գնահատուի Վարուժան Տեմիրճեան:


